HFC

2025
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի երեխաների առողջության հիմնադրամ

ՀԻՄՆԱԴՐԻ ԿՈՂՄԻՑ

Սիրելի ընկեր,

Հայաստանում մանկական առողջապահությունը փոխակերպելու մեր ճանապարհին գլխավոր ուժը միասնությունն է: Անցած 5 տարիների ընթացքում մենք հիմնադրամից դարձել ենք հոգատար համայնք՝ ձեր շնորհիվ ներգրավելով միլիարդավոր դրամներ և հույսը վերածելով բժշկական իրական արդյունքների:

Սիրելի համայնք, անկախ նրանից՝ նվիրատվություն եք արել, կիսվել եք որևէ պատմությամբ, թե տրամադրել եք ձեր ժամանակը, դուք մեր հաջողությունների անբաժան մասն եք: Ձեր աջակցությամբ մեր շահառու ոչ մի երեխայի ապագա այլևս կախված չէ ֆինանսներից:

Շնորհակալ ենք 2025-ին մեր կողքին լինելու համար: Եկեք շարունակենք միասին օգնել, որպեսզի Հայաստանում ոչ մի երեխա միայնակ չմնա ծանր հիվանդության դեմ պայքարում:

Արմեն Մարտիրոսյան
Հիմնադիր տնօրեն

ԱՄՓՈՓՈՒՄ

ՄԵՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Մենք աջակցում ենք առողջական ամենածանր մարտահրավերների առջև կանգնած ընտանիքներին և նպաստում Հայաստանի բժշկական ենթակառուցվածքների զարգացմանը՝ միաժամանակ ձևավորելով հավաքական պատասխանատվության ազգային մշակույթ:

01

Վաղ կանխարգելում

Աջակցություն ծանր հիվանդություններ ունեցող երեխաներին՝ հետագա բարդացումների կանխարգելմամբ:

02

Ճշգրիտ ախտորոշում

Համապարփակ հետազոտությունների ապահովում՝ արդյունավետ բուժման նպատակով:

03

Միջազգային չափանիշներով բուժօգնություն

Առաջնակարգ բուժման հասանելիություն Հայաստանի և արտերկրի առաջատար կլինիկաներում:

ՄԵՐ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Հայաստան, որտեղ յուրաքանչյուր երեխա ստանում է անհրաժեշտ բուժօգնություն՝ անկախ ընտանիքի ֆինանսական հնարավորություններից:

ՄԵՐ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ · 2021-ԻՑ

5 ՏԱՐԻ՝ ՓՈԽԵԼՈՎ ԿՅԱՆՔԵՐ

6ՄԼՆ+
ԱՄՆ դոլարի ներդրում երեխաների բուժման գործում

120,000+
անհատական նվիրատվություն

4,200+
երեխայի տրամադրված աջակցություն

16,000+
հետազոտված երեխա՝ նվիրաբերված առաջատար բժշկական սարքավորումներով

2025-Ը ԹՎԵՐՈՎ

Ընդհանուր ներգրավված միջոցներ

517 ՄԼՆ ՀՀ ԴՐԱՄ

Ընդհանուր ծախսված միջոցներ

536 ՄԼՆ ՀՀ ԴՐԱՄ

Գործող ծրագրեր

8

Աջակցություն ստացած երեխաներ

1,954

03

ՀԻՄՆԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հանրային մոբիլիզացիա · Մասնագիտացված բժշկական ծրագրեր · Իրազեկման միջոցառումներ

ՀԱՆՐԱՅԻՆ ՄՈԲԻԼԻԶԱՑԻԱ

ԻՆԵՍԱ, 4 ՏԱՐԵԿԱՆ

«CHARITÉ» ԿԼԻՆԻԿԱ · ԲԵՌԼԻՆ, ԳԵՐՄԱՆԻԱ

Ինեսայի մոտ ախտորոշվել էր անևրիզմա, որը լուրջ վտանգ էր սպառնում նրա կյանքին: Անհրաժեշտ էր անհապաղ բարդ վիրահատություն, որն անհնար էր իրականացնել Հայաստանում: Բեռլինի «Charité» կլինիկայում իրականացված վիրահատության շնորհիվ Ինեսայի կյանքը փրկվեց:

Այսօր Ինեսան ապաքինվում է և արդեն վերադարձել է նկարչությանը, պարին ու իր սիրելի փազլներին:

32,580,000 ՀՀ ԴՐԱՄ վիրահատության համար

ՀՈՎՀԱՆՆԵՍ, 17 ՏԱՐԵԿԱՆ

ՍՐՏԻ ՓՈԽՊԱՏՎԱՍՏՈՒՄ · ԲԵԼԱՌՈՒՍ

Մաթեմատիկայով, նկարչությամբ ու երաժշտությամբ ապրող 17-ամյա Հովհաննեսը սրտի ծանր հիվանդության պատճառով անհապաղ սրտի փոխպատվաստման կարիք ուներ, իսկ ժամանակը չափազանց սուղ էր:

Ընդամենը օրերի ընթացքում մեր համայնքը համախմբվեց և հավաքվեց անհրաժեշտ ողջ գումարը: Վիրահատությունը բարեհաջող անցավ, և այժմ Հովհաննեսն անցնում է ապաքինման երկար, բայց հույսով լի ճանապարհը:

59,200,000 ՀՀ ԴՐԱՄ

հավաքագրված ընդամենը օրերի ընթացքում

ՀԱՆՐԱՅԻՆ ՄՈԲԻԼԻԶԱՑԻԱ

ՄԵԿ ՀԱՄԱՅՆՔ, ՀԱԶԱՐԱՎՈՐ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Էմիլի, 5 ամսական, Մոսկվա

Լյարդի փոխպատվաստում (լեղուղիների ատրեզիա)

14,000,000 ՀՀ ԴՐԱՄ

Դավիթ, 1 տարեկան, Սանկտ Պետերբուրգ

Պրոտոնային թերապիա (նեյրոբլաստոմա)

17,605,000 ՀՀ ԴՐԱՄ

Արման, 16 տարեկան, Մինսկ

Երիկամի փոխպատվաստում (Ալպորտի համախտանիշ)

29,400,000 ՀՀ ԴՐԱՄ

Նարինե, 8 տարեկան, «Արաբկիր» ԲՀ

Ընդլայնված հեմիհեպատէկտոմիա (հեպատոբլաստոմա)

14,700,000 ՀՀ ԴՐԱՄ

Ռիմա, 17 տարեկան, «Արաբկիր» ԲՀ

Մեպոլիզումաբ թերապիա (էոզինոֆիլային ասթմա)

3,916,800 ՀՀ ԴՐԱՄ

ՀԱՆՐԱՅԻՆ ՄՈԲԻԼԻԶԱՑԻԱ

Արսինե, 8 տարեկան, Սանկտ Պետերբուրգ

Ստացել է պրոտոնային թերապիա՝ ռաբդոմիոսարկոմայի բուժման նպատակով

19,300,000 ՀՀ ԴՐԱՄ

Ցավոք, Արսինեի կյանքը փրկել չի հաջողվել

Ռոբերտ, 2 տարեկան, Սանկտ Պետերբուրգ

Պրոտոնային թերապիա՝ ինտրակրանիալ Յուինգի սարկոմայի բուժման նպատակով

22,179,000 ՀՀ ԴՐԱՄ

Պրոտոնային թերապիայի կուրսը մասնակի իրականացվել է: Ցավոք, Ռոբերտի կյանքը հնարավոր չի եղել փրկել:

Նարեկ, 9 տարեկան, Մոսկվա

Լյարդի փոխպատվաստում (Վիլսոնի հիվանդություն (հավանական), սուր լյարդային անբավարարություն)

Մոսկվայում Նարեկի ծայրահեղ ծանր վիճակը թույլ չի տվել իրականացնել փոխպատվաստումը, և Նարեկի կյանքը, ցավոք, փրկել չի հաջողվել:

Առանձին հրապարակման միջոցով կներկայացվի հաշվետվություն չծախսված միջոցների նպատակային օգտագործման վերաբերյալ:

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԲԺՇԿԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ԲՈՒԺՈՒՄ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ ԵՎ ՎԻՐԱՀԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԲՈՒԺՈՒՄ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ · reArmenia

9 խոշոր դրամահավաք արշավ 2025 թվականին

210,273,087 ՀՀ ԴՐԱՄ

ուղղված բարդ վիրահատությունների և մասնագիտացված բուժման ապահովմանը

ԲԱՐԴ ՎԻՐԱՀԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

5 երեխա ստացել է համալիր աջակցություն

23,682,500 ՀՀ ԴՐԱՄ

լյարդի և երիկամների փոխպատվաստումների, բարդ միջամտությունների և բժշկական իմպլանտների համար

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԲԺՇԿԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ԱՆՀՐԱԺԵՇՏ ԴԵՂՈՐԱՅՔԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

2025 թ. ընդհանուր ներդրումը

182,448,565 ՀՀ ԴՐԱՄ



ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԲԺՇԿԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

IMAST-Ի ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

2025 թվականին շարունակեցինք մեր սերտ համագործակցությունը **IMAST հարթակի հետ**: Համատեղ ջանքերով ներգրավված միջոցները ուղղակիորեն ֆինանսավորել են շահառու երեխաների կենսականորեն անհրաժեշտ բուժումն ու դեղորայքը:

77,478,221
ՀՀ դրամ՝ ներգրավված IMAST-ի միջոցով

87
երեխայի ուղղակի ֆինանսավորում

06 ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԲԺՇԿԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԲՐՈՆԽԻԱԼ ԱՍԹՄԱՅԻ ԱԽՏՈՐՈՇՄԱՆ, ՎԱՐՄԱՆ ԵՎ ԲՈՒԺՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ

01 ՆՊԱՏԱԿ

ՀՀ առողջապահության նախարարություն

«Արաբկիր» ԲՀ

Համատեղ իրականացվող ասթմայի ախտորոշման և վարման ծրագիրը նպատակ ունի ապահովել մանկական ասթմայի վաղ հայտնաբերումն ու արդյունավետ կառավարումը՝ երեխաների համար հասանելի դարձնելով որակյալ բուժօգնությունն ամբողջ Հայաստանում:

02 ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ · 2025

~12,000

հարցազրույց

85
դպրոց

6–7 · 13–14
տարեկան երեխաներ

Արդյունքում կստեղծվի մանկական ասթմայի վերաբերյալ երկրի առաջին համապարփակ տվյալների բազան:

03 ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ

6 **մարզային կենտրոնի ստեղծում և «Արաբկիր» ԲՀ-ում ազգային ռեֆերենս կենտրոնի հզորացում**

17.12.2025 **Փոխըմբռնման հուշագիր**

ՀՀ առողջապահության նախարարության, «Արաբկիր» ԲՀ-ի և HFC Armenia-ի միջև ստորագրված հուշագիրը հիմք է ստեղծում ծրագրի երկարաժամկետ և համակարգային իրականացման համար:

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԲԺՇԿԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ՔԱՂՑԿԵՂԻ ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՍՆՈՒՑՈՒՄ

«Կարինա» քաղցկեղի ժառանգական նախատրամադրվածության կլինիկա

Նախատրամադրվածության սկրինինգ և վաղ ախտորոշման խնամք

- **24** հետազոտված բուժառու
- **5** հայտնաբերված դեպք
- **72** պլանավորված թեստ

Սնուցման աջակցության ծրագիր

Ֆինանսավորում է կլինիկական սննդաբանի աշխատանքը **ՀՀ ԱՆ «Յոլյան» արյունաբանության և ուռուցքաբանության կենտրոնում** ապահովելով անհատականացված սնուցման պլանի մշակում և մասնագիտական աջակցություն քաղցկեղ և արյան հիվանդություններ ունեցող երեխաների և դեռահասների համար:

12 ԱՄԻՍ

ծրագրի տևողություն

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԲԺՇԿԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԶՈՐԱՑՈՒՄ

49 բուժաշխատողի կրթության ֆինանսավորում

6,150,042 ՀՀ ԴՐԱՄ ներդրում բժշկական կրթության մեջ

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎՆԵՐԻՆ

- ԱՄՆ
- Իսպանիա
- Իտալիա
- Նիդերլանդներ
- Պորտուգալիա
- Արգենտինա

Մեր գործընկեր բժիշկները ներկայացրել են Հայաստանը **SIOP**, **EBMT** և **EAPS** վեհաժողովներում: Կազմակերպել ենք նաև **Արհեստական բանականության (AI) դասընթացներ** բուժաշխատողների համար:

ՖՈՆԴՀԱՅԹԱՅԹՄԱՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ՍԻՄՖՈՆԻԿ ՌՈՔ՝ ՀԱՆՈՒՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ

Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում կայացած միջոցառումը համախմբեց սիմֆոնիկ երաժշտությունն ու ռոքը՝ հօգուտ առողջական ծանր խնդիրներ ունեցող երեխաների:

Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ համատեղ կազմակերպված համերգին հնչեցին **The Beatles, Queen, Pink Floyd, Deep Purple, Scorpions, Led Zeppelin, System of a Down** և այլ խմբերի հիթերի սիմֆոնիկ մշակումները (դիրիժոր՝ Հարություն Արզումանյան, կիթառի մենակատար՝ Վարդան Գաբոյան):

Գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր՝ Սերգեյ Սմբատյան

45 ՄԼՆ ՀՀ ԴՐԱՄ երեխաների կյանք փրկող բուժման համար

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ԲԱՑԱՌԻԿ ՀՈՎԱՆԱՎՈՐ YoHealth

ԳԼԽԱՎՈՐ ՀՈՎԱՆԱՎՈՐՆԵՐ «Ամերիաբանկ» ՓԲԸ · Երևանի քաղաքապետարան

ՀՈՎԱՆԱՎՈՐ Հայ վիրավոր հերոսների հիմնադրամ (AWHF)

ԱՋԱԿԻՑ Concept Events

ՖՈՆԴՀԱՅԹԱՅԹՄԱՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

HFC ARMENIA-Ն՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՐԹԱԿՈՒՄ

2025 թվականի հուլիսին HFC Armenia-ն Մադրիդում կայացած Հայկական բժշկական համաշխարհային համագումարին ներկայացրեց Հայաստանը՝ միջազգային բժշկական համայնքին ծանոթացնելով Հիմնադրամի գործունեությանն ու մանկական առողջապահության ոլորտում իրականացվող ծրագրերին:

Մեր թիմը ներկայացրեց Հիմնադրամի փորձառությունը օրգանների փոխպատվաստման և մանկական առողջապահության ոլորտներում՝ կիսվելով ձեռքբերումներով և համագործակցության ուղիներով տարբեր երկրների գործընկերների հետ:

ԻՐԱՁԵԿՈՒՄ ԵՎ ԲՐԵՆԴԻՆԳ

ՆՈՐ ՎԻԶՈՒԱԼ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ

2025 թվականին համագործակցեցինք **Braind** ընկերության հետ՝ թարմացնելով Հիմնադրամի բրենդային ինքնությունը: Նորացվել է մեր լոգոն, գունային ներկապնակը, իսկ որպես գլխավոր խորհրդանիշ ընտրվել է աղավնին, որը մարմնավորում է այն հույսն ու աջակցությունը, որ Հիմնադրամը փոխանցում է աջակցության կարիք ունեցող երեխաներին և նրանց ընտանիքներին:

01 · ԽՈՐՀՐԴԱՆԻՇ

Աղավնի
Հույսն ու աջակցությունը՝ լոգոյի սրտում:

02 · ԳՈՒՆԱՅԻՆ ՆԵՐԿԱՊՆԱԿ

#3155A6 #FDB913 #AEC3E5 #8CD2C5 #FFD27C

03 · ՏԱՌԱՏԵՍԱԿ

AA **Braind Bebas**

Aa **Montserrat Arm**



Բրենդի փոխակերպում, 2025

04

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ԾԱԽՍԵՐ

Ստացած նվիրատվություններ

Անհատական նվիրատվություններ	79.4%	410,486,000 ՀՀ ԴՐԱՄ
Կորպորատիվ նվիրատվություններ	18.93%	97,850,000 ՀՀ ԴՐԱՄ
Դրամաշնորհներ և հիմնադրամներ	1.16%	5,980,000 ՀՀ ԴՐԱՄ
Այլ	0.52%	2,684,000 ՀՀ ԴՐԱՄ
Ընդհանուր ներդրումներ		**517,000,000 ՀՀ ԴՐԱՄ**

Ծախսերի բաշխում

Ուղղակի ծրագրային ծախսեր 89.3% 478,400,000 ՀՀ ԴՐԱՄ

Քաղցկեղի ժառանգական նախատրամադրվածության կլինիկա · Բրոնխիալ ասթմայի ծրագիր · Վիրահատություններ և թանկարժեք բուժում · Դեղորայքային ապահովում · SMA ծրագիր · Բժշկական հետազոտություններ · Կարողությունների զարգացում · Մնուցման աջակցություն

Գործառնական և վարչական ծախսեր 10.7% 57,600,000 ՀՀ ԴՐԱՄ

Գործադիր կառավարում · Իրավաբանական և հաշվապահական ծառայություններ · Մարքեթինգ և հանրային կապեր · Գրասենյակի վարձակալություն · Աշխատակազմի վերապատրաստում · Բժշկական ապահովագրություն · Աուդիտորական ծառայություններ

Ընդհանուր ծախսեր 536,000,000 ՀՀ ԴՐԱՄ

05

ՄԵՐ ԱՋԱԿԻՑՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԸ

ԿԱՐԾԻՔՆԵՐ

“

Մեզ համար առանձնահատուկ նշանակություն ունի Հայաստանի երեխաների առողջության հիմնադրամի հետ համագործակցությունը: Մեծապես գնահատում ենք հիմնադրամի գործունեությունը, երեխաների առողջության պահպանմանն ու բարելավմանն ուղղված ծրագրերը, նաև այն հետևողական և մարդասիրական առաքելությունը, որը հիմնադրամն իրականացնում է տարիներ շարունակ:

Այսօր, երբ երեխաների առողջության ոլորտում առկա մարտահրավերները շարունակում են մնալ արդիական, մեր համատեղ աշխատանքը ձեռք է բերում ավելի մեծ նշանակություն:

Վստահ ենք, որ երաժշտությունը կարող է կարևոր դեր ունենալ այս նախաձեռնության հաջողության մեջ՝ բարձրացնելով հասարակական ուշադրությունը և խթանելով աջակցությունը: Ուրախ ենք, որ համատեղ կայացած «Սիմֆոնիկ ռոք» նախագիծը կարողացավ իր ներդրումն ունենալ երեխաների առողջությանն ուղղված համատեղ ջանքերում:

Սերգեյ Սմբատյան
Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր, Հայաստանում ՅՈՒՆԻՍԵՖ-ի ազգային դեսպան

ԿԱՐԾԻՔՆԵՐ

“
Հայաստանի երեխաների առողջության հիմնադրամի գործունեությունը կարևոր դեր է ունեցել մանկական բարորակ արյունաբանական հիվանդություններով երեխաների բուժման և խնամքի կազմակերպման գործում՝ ապահովելով անհրաժեշտ դեղորայքի հասանելիությունը և հնարավորություն տալով երեխաներին ստանալ ժամանակակից ու արդյունավետ բուժում՝ անկախ սոցիալական կամ ֆինանսական սահմանափակումներից:

Հիմնադրամի աջակցությամբ մեր պացիենտներին տրամադրվել են բարձրարժեք և կենսական նշանակություն ունեցող դեղամիջոցներ, այդ թվում՝ Octagam, Revolade, Jadenu, Rituximab և Ferinject, որոնք հաճախ հանդիսանում են հիվանդության վերահսկման և պացիենտների կյանքի որակի բարելավման առանցքային բաղադրիչ: Բացի այդ, Հիմնադրամը ֆինանսավորել է գենետիկական ախտորոշումները՝ նպաստելով ճշգրիտ ախտորոշման և անհատականացված բուժման իրականացմանը՝ միջազգային չափանիշներին համապատասխան:

Հիմնադրամը ֆինանսավորել է նաև «Nutritious Support Service» ծրագիրը, որը կարևոր աջակցություն է տրամադրում բուժում ստացող երեխաներին և նրանց ընտանիքներին: Մենք բարձր ենք գնահատում Հայաստանի երեխաների առողջության հիմնադրամի հետևողական աշխատանքը և վստահ ենք, որ այս համագործակցությունը շարունակելու է նպաստել մանկական արյունաբանության զարգացմանն ու մեր փոքրիկ պացիենտների կյանքի որակի բարելավմանը:

Հայկ Գրիգորյան
«Յոլյան» արյունաբանության և ուռուցքաբանության կենտրոնի տնօրեն

ԻՆՉ ԵՆ ԱՍՈՒՄ ՄԵՐ ՀԱՎԱՏԱՐԻՄ ՆՎԻՐԱՏՈՒՆԵՐԸ

“

Շնորհակալություն ձեր մեծ նվիրումի համար: Իմ անձնական կարգախոսն է՝ օգնել երեխաներին, որ միշտ ժպտան: Ես ամեն ամիս իմ փոքր ներդրմամբ կանգնած եմ երեխաների կողքին, որովհետև բարության նույնիսկ մի կաթիլը նրանց հույս է տալիս:

Լիլիթ Մովսիսյան

“

Ձեր աշխատանքն այնքան ոգեշնչող է և խորապես իմաստալից: Ես երբեք չեմ հեռանա այս ընդհանուր տեսլականից, որը լի է սիրով և բացառիկ նվիրումով: Ի սրտե շնորհակալ եմ:

Քրիստինա Գալստյան
Բժիշկ, հոգեթերապևտ, նյարդաբան

ՄԵՐ ԱՋԱԿԻՑՆԵՐԻ ՑԱՆՑԸ

ՄԵՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԸ

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՆՎԻՐԱՏՈՒՆԵՐ

- Adobe
- Ամերիաբանկ
- ԱՄԻՕ Բանկ
- Ակբա բանկ
- ԱրարատԲանկ
- Էվոկաբանկ
- Ինեկոբանկ
- Բիբլոս Բանկ
- ՖԻՆՔԱ
- VISA
- Viva
- Գազպրոմ Արմենիա
- Yandex Go
- GlobalGiving
- Benevity
- AMAA
- ՀՕՖ «Այո՛» հարթակ
- Stirling Foundation

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

- «Արաբկիր» ԲՀ – ԵԴԱԻ
- Վագա Ֆարմ
- ՀՀ ԱՆ Յոլյան արյունաբանության և ուռուցքաբանության կենտրոն
- «Մուրացան» համալսարանական հիվանդանոցային համալիր
- «Ուիգմոր» կանանց և երեխաների հիվանդանոց
- «Սուրբ Աստվածամայր» ԲԿ
- reArmenia
- ՀՀ առողջապահության նախարարություն
- ՖարմաՏեք
- «ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» ՓԲԸ
- «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ
- IMAST
- Go Pharm

ԱՐՏԵՐԿՐՈՒՄ

- «Charité» հիվանդանոց (Բեռլին)
- Վ.Ի. Շումակովի անվան կենտրոն (Մոսկվա)
- Ի.Պ. Պավլովի անվան համալսարան (Սանկտ Պետերբուրգ)
- «Կարդիոլոգիա» ՀԳԳԿ (Մինսկ)
- «2-րդ քաղաքային մանկական կլինիկական հիվանդանոց» (Մինսկ)
- Ս. Բերեզինի անվան ինստիտուտ (Սանկտ Պետերբուրգ)
- Հալլեի համալսարանական ԲԿ (Գերմանիա)
- Արման Թրուսոյի անվան հիվանդանոց (Փարիզ)
- «Բամբինո Ջեզու» մանկական հիվանդանոց (Հռոմ)
- Սլոան Քեթերինգի անվան քաղցկեղի կենտրոն (Նյու Յորք)

06

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄ

ՄԵՐ ԹԻՄԸ

Արմեն Մարտիրոսյան
Հիմնադիր տնօրեն

Արտակ Բեգլարյան
Ռազմավարական զարգացման հարցերով խորհրդական

Իվետա Ղազարյան
Գործառնությունների ղեկավար

Սյուզան Հոբոսյան
Ծրագրերի ղեկավար

Մարիամ Իսրայելյան
Մարքեթինգային ծրագրերի ղեկավար

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Արա Բաբլոյան
«Արաբկիր» ԲՀ-ԵԴԱԻ կառավարման խորհրդի նախագահ, գիտական ղեկավար

Ալեքսանդր Ուռումյան
«Շենգավիթ» ԲԿ-ի գլխավոր տնօրեն

Արմեն Նուրբեկյան
ՀՀ կենտրոնական բանկի փոխնախագահ

Արմինե Մկրտչյան
«ՄերակիՓալ» ընկերության տնօրեն, կազմակերպական զարգացման քոուչ

Լուսինե Քասարջյան
«Հայ մշակութային և գիտական ընկերակցություն» հիմնադրամի տնօրեն

Նարեկ Մկրտչյան
ԱՄՆ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան

Սամվել Մարտիրոսյան
Տեղեկատվական անվտանգության փորձագետ

ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Աստղիկ Բաղդասարյան
«Արաբկիր» ԲՀ շնչառական բժշկության և ալերգոլոգիայի ծառայության ղեկավար

Լուսինե Քրմոյան
«Յոլյան» արյունաբանության և ուռուցքաբանության կենտրոնի մանկական արյունաբան

Հռիփսիմե Ապրեսյան
«Մուրացան» համալիրի ինֆեկցիոն հիվանդությունների կլինիկայի ղեկավար

Նարա Լալազարյան
Լոնդոնի «Գրեյթ Օրմոնդ Սթրիթ» հիվանդանոցի մանկական նյարդավիրաբուժության կլինիկական ֆելոու

Ռուզաննա Պապյան
«Յոլյան» արյունաբանության և ուռուցքաբանության կենտրոնի մանկական ուռուցքաբանության բաժանմունքի վարիչ

07

2026 ԹՎԱԿԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2026 ԹՎԱԿԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

01 Վիրահատություններ և բուժում արտերկրում

Հայաստանում չիրականացվող բժշկական միջամտությունների կազմակերպում և ֆինանսավորում:

02 Վիրահատական միջամտություններ և բուժում Հայաստանում

Հայաստանում գործող բժշկական հաստատություններում բարդ ու մասնագիտացված բուժման հասանելիության ապահովում:

03 Դեղորայքային ապահովում

Կենսական անհրաժեշտության և թանկարժեք դեղամիջոցների անխափան տրամադրում երեխաներին:

04 Գենետիկական և այլ ախտորոշիչ հետազոտություններ

Անհրաժեշտ բարդ հետազոտությունների և ճշգրիտ ախտորոշման հասանելիության ապահովում:

05 Երեխաների բրոնխիալ ասթմայի ախտորոշման, վարման և բուժման արդյունքների բարելավման ծրագիր

Ավարտված 12,000 հարցազրույց, տվյալների վերլուծություն և 6 մարզային կենտրոնի նախապատրաստում գործարկման:

06 Բուժաշխատողների կարողությունների զարգացում

Շարունակական աջակցություն կրթական ծրագրերին ու գիտաժողովներին մասնակցությանը, արտերկրում բժիշկների վերապատրաստմանն ու մասնագիտական որակավորման բարձրացմանը:

07 Ողնուղեղային մկանային ատրոֆիա (SMA) ունեցող երեխաների բուժօգնության ապահովում

Հիվանդության կառավարման աջակցություն, «Roche» ընկերության «Evrysdi» կենսական դեղամիջոցի ձեռքբերման ֆինանսավորում և ապահովում:

08 Կարինա ժառանգական քաղցկեղի նախատրամադրվածության կլինիկայի զարգացում

96+ երեխայի գրանցում, առնվազն 72 երեխայի խորացված գենետիկական թեստավորում, միջազգային քննարկումների կազմակերպում և գիտական ուղեցույցի հրատարակում:

09 5-ամյա հոբելյան

Անցած 5 տարիների ազդեցության ամփոփում և հաջորդ 5 տարիների ռազմավարության հիմքերի նախապատրաստում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՆՔ ԿՅԱՆՔԵՐ ՓՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Միասին՝ հանուն յուրաքանչյուր երեխայի առողջ ապագայի:

hfc.am | info@hfc.am | +374 95 590-500 | @hfcarmenia